«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

18 Ապրիլի 2023, N 6 - 8

2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱՆԻՑ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ԱԿԱԴԵՄԻԿԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լսելով և քննարկելով «2023-2024 ուսումնական տարվանից մագիստրոսական կրթական ծրագրերով ակադեմիական խմբերի ձևավորման և ակադեմիական կազմի ներգրավման սկզբունքները սահմանելու մասին և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. 2023 թվականից սկսած մագիստրոսական կրթական ծրագրերով ակադեմիական խմբերի ձևավորման նորմատիվները սահմանել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի առկա ուսուցմամբ մագիստրատուրայի տվյալ ուսումնական տարվա ընդունելության կանոնակարգով:

2. 2023-2024 ուսումնական տարվանից մինչև 9 ուսանողով ձևավորված կրթական ծրագրերի ուսումնական բեռնվածությունը ակադեմիական կազմին բաշխել ժամավճարի հիմունքներով (ներառյալ հիմնական ակադեմիական կազմը), իսկ վարձատրությունն իրականացնել ժամավճարի համար սահմանված նորմատիվներով:

3. 10 և ավելի ուսանողներով ձևավորված կրթական ծրագրերի ուսումնական բեռնվածությունը ներառել ամբիոնների ակադեմիական կազմի անհատական բեռնվածության մեջ:

4. Ուժը կորցրած ճանաչել.
   1) «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2019 թվականի հունիսի

18-ի «Առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով առաջին կուրսի ընդունելության խմբերի նվազագույն չափերը սահմանելու մասին» N 2 որոշումը.

2) «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2021 թվականի սեպտեմբերի 7-ի «2021-2022 ուսումնական տարվա առկա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրով առաջին կուրսի ընդունելության խմբերի նվազագույն չափերը սահմանելու մասին» N 3 - 1 որոշումը.

3) «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2022 թվականի հուլիսի 1-ի «2022-2023 ուսումնական տարում համալսարանի մագիստրոսական կրթական ծրագրերով ակադեմիական խմբերի ձևավորման ժամանակավոր նորմատիվներ և ակադեմիական կազմի ներգրավման սկզբունքներ սահմանելու մասին» N 13 - 6 որոշումը.

4) «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2022 թվականի սեպտեմբերի 22-ի «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության Գյումրու մասնաճյուղում 2022-2023 ուսումնական տարվա առկա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրերով առաջին կուրսի ընդունելության խմբերի նվազագույն չափերը սահմանելու մասին» N 1 - 5 որոշումը:

5. Սույն որոշման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

2023 թ. ապրիլի 18
Երևան